

C. 37564

№ 6 ՓՈՔՐԻԿ ԳՐԱԴԱՐԱՆ № 6

գրք

Գ. ՍԵՍՅԱՆ

ԿԱԳՐԱՆԿԱՅՈՒՆ



891.995
Մ-64

ԹԻՖԼԻՍ 1929

ԹԻՖԼԻՍ—1929

28.06.2013

11253



1543-81

Գրառեպլար № 1757.

Տիրած 3000.

Թիֆլիս, Ժ.Տ.Գ.Պ. Պոլիգրաֆարեատի 6-դ տպ., Կեցիտովելի փ. № 3.

ՎԱԳՐՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ


Որվան մի որ, խանում խաթուն,
Տան տիրական պահնորդ կատուն
2ը հավանեց ել կաթ, մածուն,
Տաշտ, որորոց, ծալքը փափուկ,
Մանուկների ծոցը տաքուկ,
2ուզեց վորսալ ել տանը մուկ:
Ուզեց ապրել ազատ, անկախ,
Զանից, մարդից հեռու, անվախ:
Ու վեր կացավ, կորավ գյուղից,
Խնչպես մկներն՝ իր յերկյուղից:

Մար ու ձորով հասավ անտառ:
Անտառումը—փորսն անսպառ...
Մեկ ել լսեց՝ քաղցրահնչյուն



Աջից, ձախից հազար թռչուն
Ծվվում են անուշ-անուշ:
Ու քար կտրած՝ նայեց զգուշ.

Դեմի ծառին տեսավ մի ծիտ,
Նստած հանգիստ ու միամիտ,
Իրան համար յերգ ե յերգում:



Մեր կատուն ել իրա խելքում՝
Վորսալ ուզեց.
Տեղը զգեց,

Փորը գետնին, մեջքը ծրուած,
 Աչքերը չորս, լայն ու չուած,
 Վոր ներքևից նայեց վերև՝
 Աչքից կորան ճյուղ ու տերև:
 Դեռ մի թաթը կամաց-կամաց
 Առաջ տարավ, անշարժ մնաց.
 Հետո ել մյուս թաթը մեկնեց,
 Փորսող տվավ, ուժ հավաքեց,
 Ու հենց պետք է նետեր իրան՝
 Վոր մի շվաք մթնեց վրան —
 Ու ծտի տեղ վորսկան կատուն
 Տեսավ ինքն է վազրի թաթում:
 Կարմիր աչքեր, յերկար բեղեր,
 Են ով տեսներ, վոր չվախեր.
 Չանկերը մեծ, սուր ու կեռ-կեռ.
 Եղպես գազան չեր տեսել դեռ:
 Ժանիքներն ել մերկ ահագին

Հենց վոր տեսավ՝ շարժեց ազին.
 — Հը՛ր, հորեղբայր, չես ճանաչում:
 — Ի՞նչ հորեղբայր, ի՞նչ ես հաչում:
 — Վահ, տնաշեն, յերդվե՛մ միթե,



Ասածս հո, աշխարհք գիտե:
 Քանի՛ր անգամ իմ խեղճ հայրը,
 Լուսահոգի բո յեղբայրը
 պատմել է մեզ,
 վոր ճիշտ բեզ պես

Ես անտառում, ես ձորերում,
 Դեռ մենք չեղած, հին որերում
 Մի յեղբայր ե ունեցել նա,
 Բայց չգիտե ուր ե հիմա:
 Թե չե ինչի, նայիր կուգես,
 Մի ինձ վրա, մի մեկ ել քեզ...
 Վազրը նայեց, մնաց ապշած:
 — Դե լսվ, ասենք, ճիշտ ե, ասաց,
 Մեր ցեղի մեջ վոր կա մի կապ,
 Ինչո՞ւ չկաս, բա ձագիս չափ:
 — Քո ձագիդ չափ, բո ձագիդ չափ...
 Դեռ ուրախ չե՞ս, վոր կանք ես չափ.
 Ես հո մենք ենք, փորր ես ասում,
 Դո՛ւ լինեյիր — ինչ եմ ասո՞ւմ,
 Եզ վոչ լինեք, թե չե հալալ
 Կեսիս չափ ել չեյիր մնալ:
 Դու չգիտես ինչ ասել ե —

«Աղամվորդու, ձեռք ընկնելը»:
 — Աղամվորդին, աղամվորդին,
 Յույց տուր մի ինձ, ինձ եզ լրբին.
 Տեսնեմ եզ ով, եզ ո՞վ ե, ո՞վ,
 Վոր աշխարհքը իր անունով
 Ըուռ ե տալիս, ինչպես ուզի,
 Բուրդ տամ նրան, բամբակ գզի:
 Ու՞ր ե, կարո՞ս,
 Մի ինձ ցույց տա՛ս:
 — Այ, աղանջ դիր, հրես, հրես,
 Չայնն ե նրա կացնի, կարծես:
 Ու մեկ մեկու յետքից ըշտապ
 Վազրն ու կառու՛ն յեկան այնչափ,
 Վոր գյուղացին
 Դեռ իր կացինն
 Ուժով տված կոճղի ճեղքից
 Դուրս չհանած՝ նրա կողքից

Բարե տվին
 Զոկ-ջոկ, մին-մին,
 Վազրն ու կատուն,
 Աղամվորդուն:



— Բարի աջողում, աղամվորդի.
 Պետք է դուրս գաս մենամարտի

Եսոր ինձ հետ, վոր ուժներս
 Փորձենք, տեսնեմ, ինչի՞ տեր ես.
 Դու ի՞նչ ուժով, ի՞նչ հնարքով,
 Քո ունեցած վոր շնորհքով
 Վողջ աշխարհին տեր ես դառել՝
 Յեղբայրներիս գերիդ արել:
 — Համաձայն եմ հազար անգամ,
 Ղափլան ախպեր, հին բարեկամ.
 Դե, համեցեք, թաթերդ բեր,
 Ես իմ կոճղի ճեղքումը դիր,
 Վոր իմանամ առածիդ տեր,
 Ճիշտ ուզում ես մենամարտել.
 Այս մինչև մի տուն զնամ,
 Աժա տանն ե. առնեմ ու գամ:
 Զույգ թաթերը իրար սղմեց,
 Վազրը կոճղի ճեղքը մղեց.
 Ահ հենց շարժվեց կոթը կացնի՝

Վոնց վոր միջով գնդակ անցնի,
 Սարեր, ձորեր իրար առան,
 Աշխարհքն ասես կերան, տարան...
 Ձեն են տալի վազրի ձենով.
 Բայց տերն ո՞վ ե, լսողը՝ ով:
 Կոճղը առավ, պառկեց գետին,
 Ու տալիս ե գլխին, վոտին.
 Իսկ քիչ հեռու, նոր թխկոցով
 Նույն գյուղացին, հենց նույն կացնով
 Կտրում ե հա, մի ուրիշ ծառ...
 Վազրը նվազ, թույլ, ուժասպառ,
 Պոչը մեկնած, գլուխը յետ,
 Դանդաղ ու խոր տնքոցի հետ,
 Ամեն անգամ քաշված փորի
 Կաշվի տակից, մերկ կողերի
 շարքն ե բացվում,
 նորից ծածկվում:

Իսկ աչքերը—են վառ ճրագ,
 Հիմա՝ մթնած ու կիսափակ,



Բան չեն ջոկում չորս բոլորին,
 Ոճն ել չընեն նրա որին:
 Մեկ ել նայեց, տեսավ կողքին՝
 Իր փոքրացած յեղբորվորդին:
 Չայնը նվազ ու հուսահատ
 Դիմեց նրան ընդհատ, ընդհատ.

— Յեղբորվորդի՛, լավ գիտես դուն
 եղ անիծած աղամկորդուն.
 Արնախումին եղ մեր ցեղի,
 Քեզ չափ դառնամ՝ բաց կթողի՞...

с. 37564



87618



Երեւիթեն 1948 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0400556

ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՆՈՒՑՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ
ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐԱԳՈՒՅՈՒՆՆԵՐԸ

«Փոքրիկ գրադարան»

- № 1. Բաղալը (սակավաթիվ) 25 կոպ.
№ 2. Խրճիթում » » 15 կոպ.
№ 3. Վանիկը » » 15 կոպ.
№ 4. Մայրը 15 կոպ.
№ 5. Ճիթ-ճիթը 15 կոպ.
№ 6. Վագրն ու կատուն 15 կոպ.

Վաճառվում են հայ զրավաճառանոցներում:

Գումարով գնողներին զեղչ:

Հեղինակի հասցեն՝ Тифлис, улица Жуковского, д. № 10.